**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2026 թվականի N 1920-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգի 2-րդ կետը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.2026 թվականի սեպտեմբերի 15-ին, ժամը՝ 10:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-63) թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ:
2.2026 թվականի սեպտեմբերի 15-ին, ժամը՝ 11:30-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-54) թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ:
3.2026 թվականի սեպտեմբերի 15-ին, ժամը՝ 14:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժնի 1-ին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-52) թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ:
4.Աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի 2-րդ և 3-րդ կետերում նշված մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը և նախապատրաստական աշխատանքների իրականացումը:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ՀՈՎՀԱՆԵՍՅԱՆ**

2026 թվականի օգոստոսի 14
ք.Մեծամոր